

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

ՎԶՄԲ վարկ No.8374-AM
ԶՄԸ վարկ No. 5504-AM
ԶՄԸ վարկ No. 5505-AM

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվարի 28-ին ավարտվող տարվա
համար

ԵՐԵՎԱՆ
Մարտ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ	3
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	4
ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ԵՎ ՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ	
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ	25

**ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ**

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ղեկավարությունը պատասխանատու է 2023 թվականի փետրվարի 28-ին ավարտված տարվա «ամայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Սրբունակության Երկրորդ ծրագրի» համար հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որը ֆինանսավորվում է ՎՋՄԲ 8374-AM, ՋՄԸ 5504-AM և ՋՄԸ 5505-AM վարկային համաձայնագրերով՝ համաձայն Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված <<Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով>> ՀՀՀՀՄ ստանդարտի (ՀՀՀՀՄ-դրամարկղային սկզբունք) և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց):

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ղեկավարությունը պատասխանատու է:

- Հաշվապահական քաղաքականության ճիշտ ընտրության և կիրառման,
- Տեղեկատվության ներկայացման, ներառյալ՝ հաշվապահական քաղաքականությունն այնպես, որ ապահովվի արդիական, հուսալի, համադրելի և հասկանալի տեղեկատվություն,
- 2023 թվականի փետրվարի 28-ին ավարտված տարվա համար լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման համար:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ղեկավարությունը պատասխանատու է նաև.

- Ծրագրի ողջ ընթացքում ներքին հսկողության արդյունավետ և հուսալի համակարգի մշակման, ներդրման և պահպանման,
- Պատշաճ հաշվապահական գրառումների վարման, որոնք բավարար են նախագծի գործառնությունները արտացոլելու և բացատրելու համար, և որոնք թույլ են տալիս նրանց երաշխավորելու, որ նախագծի վերաբերյալ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են Համաշխարհային բանկի դրամարկղային մեթոդին և ղեկավար սկզբունքներին,
- Նախագծի ակտիվների պաշտպանության համար ողջամիտ, մատչելի միջոցների ընդունման և հաստատման, որ ստացված միջոցներն օգտագործվել են վարկային համաձայնագրին և Համաշխարհային բանկի ուղեցույցներին համապատասխան, տնտեսման և արդյունավետության նկատմամբ պատշաճ ուշադրությամբ, և միայն այն նպատակների համար, որոնց համար տրամադրվել է ֆինանսավորում,
- Խարդախության և այլ սխալների կանխարգելման և բացահայտման:

2023 թվականի փետրվարի 28-ին ավարտված տարվա համար հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023 թվականի մարտի 15-ին:


Ազատ Թովմասյան
Ծրագրի ղեկավար


Հրանտ Տեր-Վարդանյան
Ֆինանսական ղեկավար

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ՎՋՄԲ 8374-AM Վարկով, ՋՍԸ 5504-AM Վարկով և ՋՍԸ 5505-AM Վարկով ֆինանսավորվող «Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության Երկրորդ ծրագրի» (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. փետրվարի 28-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2023թ. փետրվարի 28-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Ծրագիրը իրականացնող կազմակերպության փոփոխություն

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 1.4-ին, որտեղ նկարագրված է Ծրագիրն իրականացնող կազմակերպության փոփոխությունը:

Հանգամանքի շեշտադրում – Դրամարկղային հիմունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությանն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային հիմունքով, որի պատճառով այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «ՀՀՀՀՄՍ-դրամարկղային հիմունք» ստանդարտի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների ֆինանսական Ձեռնարկի (ՀՔ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային/Ֆինանսավորման Համաձայնագրերի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2014թ. օգոստոսի 6-ին կնքված 8374-AM Վարկային Համաձայնագրում, Հայաստանի Հանրապետության և Միջազգային Զարգացման Ընկերակցության միջև 2014թ. օգոստոսի 6-ին կնքված 5504-AM և 5505-AM Ֆինանսավորման համաձայնագրում (Ֆինանսավորման համաձայնագրեր) նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:

2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերն ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերն ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն ֆինանսավորման Համաձայնագրերի:
3. Նպատակային հաշիվները վարվել են՝ համաձայն Վարկային/Ֆինանսավորման Համաձայնագրերի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն ֆինանսավորման համաձայնագրերի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
5. Ենթածրագրերի դրամաշնորհները համապատասխանել են Ծրագրի Գործառնական Ձեռնարկին և ենթածրագրերի դրամաշնորհների համաձայնագրերի չափորոշիչներին, ընթացակարգերին և այլ պահանջներին:

Մեր կարծիքով, 2023թ. Փետրվարի 28-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

Վահագն Սահակյան, FCC
Տնօրեն



“ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ” ՓԲԸ
15 մարտ, 2023թ.

ԴՐԱՄԱՎԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր
 ՎԶՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM
 2023թ. փետրվարի 28-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԱՄՆ դոլար

	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու տարի 01.01.2022-28.02.2023	Աճողական տարի 28.02.2023	Հաշվետու տարի 01.01.2022-28.02.2023	Աճողական տարի 28.02.2023	Հաշվետու տարի 01.01.2022-28.02.2023	Աճողական տարի 28.02.2023	
Հատուկ հաշիվ (ԶՄԸ վարկ 5505-AM, ԶՄԸ վարկ 5504-AM)	-	-	-	-	-	-	-
Հատուկ հաշիվ (ՎԶՄԲ վարկ 8374-AM)	721,917	-	-	-	-	-	-
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	-	-	-	-	-	-	-
Համայնքների համաֆինանսավորում	288,118	-	-	-	-	-	-
Մրցութային ֆոնդեր	-	-	-	-	-	-	-
Այլ շահառուներ	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	1,010,035						
ԶՄԸ Վարկ 5505-AM	-	2,400,582	-	-	-	-	-
ԶՄԸ Վարկ 5504-AM	-	4,316,022	-	-	-	-	-
ՎԶՄԲ վարկ 8374-AM	1,648,281	19,851,163	-	-	-	-	-
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	328,315	1,751,427	-	-	-	-	-
Համայնքների համաֆինանսավորում	(140,894)	2,194,937	-	-	-	-	-
Մրցութային ֆոնդեր*	-	604	-	-	-	-	-
Այլ շահառուներ	554,030	5,461,567	-	-	-	-	-
Ընդամենը	2,389,732	35,976,303					
Փոխարժեքային կորուստ, վնաս	41,004	46,827					
Կատարվում 1							
Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I և II ա մասերի)	1,305,810	6,934,239	1,436,908	7,065,337	-131,098	-131,098	9,150,000
Կատարվում 2							
Ծրագրի I և II Բ մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթաֆինանսավորում	2,134,961	29,031,391	2,002,531	28,888,220	132,430	132,430	30,850,000

Կատարվող 3 շրջակա									
Սկզբնական վճար	-	57,500							2,612,500
Ընդամենը	3,440,771	36,023,130	3,439,439	36,011,057	1,332	1,332			57,500
Հատուկ հաշիվ (IDA 5505-AM, IDA 5504-AM)	-	-							42,670,000
Հատուկ հաշիվ (IBRD 8374-AM)	-	-							
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	-	-							
Համայնքների համաֆինանսավորում	-	-							
Մրցույթային ֆոնդեր	-	-							
Կանխիկ՝ ճանապարհին	-	-							
Ընդամենը	0	0							

Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:
Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023թ մարտի 15-ին:

Ազատ Թովմասյան
Ծրագրի ղեկավար

Հրաչո Տեր-Վարդանյան
Ֆինանսական ղեկավար

ՀԱՏ ԲԱՆԱԴԱՐՈՒՄՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքների գործադնատեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիրը
 ՎՋՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM
 2023թ. փետրվար 28-ին ավարտված տարվա վերաբերյալ
 ԱՄՆ դոլար

Բաժիններ	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու տարի 01.01.2022-28.02.2023	Աճողական	Հաշվետու տարի 01.01.2022-28.02.2023	Աճողական	Հաշվետու տարի 01.01.2022-28.02.2023	Աճողական	
Կումարներ 1. Համայնքային արտադրանքների անասնապահության կառավարման համակարգ	1,696,172	20,918,433	1,712,631	20,934,891	-16,458	-16,458	27,870,000
1 (ա) Կրտսավայրերի անասնապահության կառավարման պլանավորում և օժանդակում	155,088	1,415,366	150,100	1,410,378	4,988	4,988	3,870,000
1 (բ) Համայնքային ֆոնդեր	1,541,085	19,503,067	1,562,531	19,524,513	-21,446	-21,446	24,000,000
Կումարներ 2. Արժեշտային զարգացում	656,516	9,820,724	525,982	9,679,451	130,534	130,534	7,440,000
2 (ա) Ներդրումներ ենթաճարգրերում	593,876	9,528,323	440,000	9,374,447	153,876	153,876	6,850,000
2 (բ) Ժամանակ ծառայություններ	62,640	292,401	85,982	315,743	-23,342	-23,342	590,000
Կումարներ 3. Պետական հատվածի կարողությունների հզորացում	823,403	3,294,122	891,068	3,372,528	-67,666	-67,666	2,450,000
3 (ա) անրային անասնաբուժական ծառայություններ	773,612	1,904,032	840,906	1,971,326	-67,294	-67,294	1,940,000
3 (բ) Իրախուցիմալ զարգացում	49,791	1,390,091	50,162	1,390,462	-372	-372	510,000
Կումարներ 4. Ծրագրի համակարգում և կառավարում	264,680	1,932,350	309,758	1,977,428	-45,078	-45,078	2,240,000
4 (ա) Ծրագրի կառավարում	157,571	1,658,239	202,672	1,703,341	-45,101	-45,101	1,740,000
4 (բ) Անխտորինգ և գնահատում	107,109	274,111	107,086	274,088	24	24	500,000
Զբաղված	-	-	-	-	-	-	2,612,500
Ծրագրի սպասարկման վճար	-	57,500	-	57,500	-	-	57,500
Ընդամենը ծախսեր	3,440,771	36,023,130	3,439,439	36,021,797	1,332	1,332	42,670,000

Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների փաթեթի մասն են: Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023թ մարտի 15-ին:

Ազատ Թովմասյան
 Ծրագրի ղեկավար

Հրանտ Տեր-Վարդանյան
 Ֆինանսական ղեկավար

**ԾՐԱԳՐԻ ՀԱՏՈՒԿ ԼՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր ՎՋՄԲ վարկ No.8374-AM, ՋՄԸ վարկ No.5504-AM, ՋՄԸ վարկ No.5505-AM

2023թ. փետրվար 28-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2014թ. օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՋՄԲ) միջև ստորագրվել է Վարկային համաձայնագիր, համաձայն որի ՎՋՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել No.8374-AM վարկ 23,000,000 ԱՄՆ դոլար գումարով:

2014թ. օգոստոսի 6-ին Հայաստանի Հանրապետության և Զարգացման Միջազգային Ընկերակցության (ՋՄԸ) միջև ստորագրվել է Ֆինանսավորման համաձայնագիր, համաձայն որի ՋՄԸ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել No.5504-AM վարկ 3,800,000 Հատուկ Փոխարկման Իրավունք (SDR) գումարով և No.5505-AM վարկ՝ 2,460,000 Հատուկ Փոխարկման Իրավունք (SDR) գումարով:

Վարկերը տրամադրվել են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» (Ծրագիր) իրականացման համար:

Վարկային համաձայնագրերն ուժի մեջ են մտել 2015թ. հունվարի 23-ին:

Ծրագրի վերջնաժամկետն ի սկզբանե սահմանվել է 2020թ. մայիսի 31-ը: 2020թ. մարտի 26-ին Վարկային համաձայնագրերում կատարվել են փոփոխություններ, որոնցով Ծրագրի վերջնաժամկետը սահմանվել է 2022թ. ապրիլի 30-ը:

Ավելի ուշ, համաձայն 2022 թվականի մարտի 17-ի վերջնաժամկետի երկարացման գրության՝ ՎՋՄԲ-ն համաձայնել է սահմանել 2022 թվականի հոկտեմբերի 31-ը որպես ծրագրի ավելի ուշ վերջնաժամկետ:

Վարկի հետագա մասհանումները կկատարվեն ՎՋՄԲ-ի կողմից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ ստացված մասհանումների դիմումների համաձայն՝ այն իրավասու ծախսերի համար, որոնք կկատարվեն մինչև սահմանված վերջնաժամկետը (այսինքն վճարումներ այն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար, որոնք մատուցվել են մինչև վերջնաժամկետը):

Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

1.2 Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակներն են. 1) ընտրված համայնքներում բարելավել գյուղատնտեսական և անասնապահական կառավարման համակարգերի արդյունավետությունը և կայունությունը և 2) ավելացնել ընտրված անասնապահական և բարձրարժեք ագրոպարենային արժեզրեզման արտադրանքի շուկայահանումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- Համայնքային արտադրարկների անասնապահության կառավարման համակարգ,
- Արժեզրեզմանի զարգացում,
- Պետական հատվածի կարողությունների հզորացում
- Ծրագրի համակարգում և կառավարում

1.3 Ծրագրի բյուջեն

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից .

- Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ),
- Զարգացման Միջազգային Ընկերակցություն (ԶՄԸ),
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն),
- Այլ շահառուներ

1.4 Ծրագրի իրականացում

Մինչև 2017թ. հոկտեմբերի 13-ը Ծրագիրն իրականացվել է «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԳՕԴԳ) պետական հիմնարկի կողմից, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999թ. դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշման համաձայն: Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017թ. մարտի 9-ի թիվ 243-Ա որոշմամբ՝ հանձնարարվել է ՀՀ Ֆինանսների նախարարին և ՀՀ Գյուղատնտեսության նախարարին Ծրագրի վարկային համաձայնագրերում կատարել փոփոխություններ, այդ համաձայնագրերի իրականացումը վերապահել Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամին, իսկ ֆիդուցիար հատվածի իրականացումը ՀՀ Ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկին (ԱՖԾԿԿ): Վարկային համաձայնագրերում համապատասխան փոփոխությունները հաստատվել են ՀՀ Նախագահի հրամանագրով: Հրամանագիրը ուժի մեջ է մտել 2017թ. հոկտեմբերի 12-ից:

2017թ. նոյեմբեր ամսից մինչև 2019թ. մարտի 29-ը Ծրագրի ֆիդուցիար մասը իրականացվել է ԱՖԾԿԿ-ի կողմից:

2019թ. մարտի 29-ից մինչև 2019թ. հունիսի 01-ը ՀՀ կառավարության 2019թ. մարտի 21-ի N 283-Ա որոշմամբ Ծրագրի իրականացումը և ֆիդուցիար հատվածի իրականացումը վերապահվել է ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը:

2019թ. հունիսի 1-ից հետո «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում (2018թ. մարտի 23-ի ՀՕ-253-Ն) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունը և ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն: Ներկայումս Ծրագիրը իրականացվում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից, համակարգող՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչություն:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալից քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով՝ Հնարային Հտավածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկային հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3. Ներկայացման արժույթը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով :

2.4. Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի հաշվետու արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

Արտարժույթով գործարքները փոխակերպվում են ներկայացման արժույթի՝ այս գործարքների ամսաթվերի փոխարժեքով: Փոխարժեքը.

- 1) Մինչև 2021 թվականի մարտի 1-ը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի միջին հաշվարկային փոխարժեքն է գործառնական արժույթի նկատմամբ.

- 2) 2021 թվականի մարտի 1-ից.

-Ներհոսքերի համար օգտագործվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի առթի փոխարժեքը:

-Արտահոսքի համար օգտագործվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ արտարժույթի վաճառքի փոխարժեքը:

2.5. Ծրագրի Բյուջե

Ծախսերի բյուջեն կազմվում է՝ նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով հաշվետու ժամանակաշրջանի թարմացված բյուջեն:

2.6. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

**3. Վարկային միջոցների առհանումների հաշվետվություն
(SOE " SUMMARY SHEET)**

2023 թվականի փետրվարի 28-ին ավարտված տարվա վերաբերյալ

3.1 ԶՄԸ Վարկ 5504-AM

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՄԸ 5504-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել:

3.2 ԶՄԸ Վարկ 5505-AM

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՄԸ 5505-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել:

3.3 ՎԶՄԲ Վարկ 8374-AM

Դիմումի համար	Դիմումի հաստատման ամսաթիվ	1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I Բ II ա մասերի):	2. Ծրագրի I ա II Բ մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ:	Ընդամեն Ը
		ԱՄՆ	ԱՄՆ	ԱՄՆ
36 ADDA	16/03/22	399,698	638,291	1,037,989
37 ADDA	30/06/22	141,495	124,910	266,405
38 ADDA	22/09/22	94,404	354,184	448,588
39 ADDA	23/12/22	524,169	738,785	1,262,954
40 ADDA	23/12/22	60,474	36,627	97,101
41 ADDA	20/01/23	22,663	12,581	35,244
Ընդամենը		1,242,902	1,905,378	3,148,281

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

4.1. ՁՄԸ Վարկ 5504-AM և ՁՄԸ Վարկ 5505-AM

Նպատակային հաշիվ

Արժույթ

Հաշվարկային հաշիվ

Բանկ

Հասցե

ՁՄԸ Վարկ 5504-AM և ՁՄԸ Վարկ 5505-AM

ԱՄՆ դոլար

900000903873

Կենտրոնական գանձապետարան

Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի

Հանրապետություն

2023թ. փետրվար 28-ին ավարտված

տարվա վերաբերյալ

ԱՄՆ դոլար

1. Սկզբնական մնացորդ 01.01.2022

Ավելացում.

2. Աճողական սկզբնական անհավաքատասխանություն

3. ՁՄԸ-ի ֆոնդի կանխավճար/համալրում

Նվազեցում.

4. Նպատակային հաշվից մարում ՁՄԸ-ին

5. Նպատակային հաշվին կանխավճարի ներկա մնացորդը

6. Նպատակային հաշվի մնացորդ 28.02.2023թ. դրությամբ

Ավելացում.

7. Վճարված ընդունելի ծախսերի գումար

Նվազեցում.

8. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)

9. Ընդամենը հաշվետու կանխավճար

10. Տարբերություն (5) - (9)

4.2. ՎՋՄԲ Վարկ 8374-AM

Նպատակային հաշիվ	ՎՋՄԲ Վարկ 8374-AM
Արժույթ	ԱՄՆ դոլար
Հաշվարկային հաշիվ	900000903881
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն
	2023թ. փետրվար 28-ին ավարտված տարվա վերաբերյալ
	ԱՄՆ դոլար
1. Սկզբնական մնացորդ 01.01.2022	721,917
Ավելացում	
2. Աճողական սկզբնական անհամապատասխանություն	-
3. ՎՋՄԲ-ի ֆոնդի կանխավճար/համալրում	1,752,982
Նվազեցում	
4. Նպատակային հաշվից մարում ՎՋՄԲ-ԻՆ	104,701
5. Նպատակային հաշվին կանխավճարի ներկա մնացորդը	2,370,198
6. Նպատակային հաշվի մնացորդ 28.02.2023	-
Ավելացում	
7. Վճարված ընդունելի ծախսերի գումար	2,370,198
Նվազեցում	
8. Ստացված տոկոսների (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	2,370,198
10. Տարբերություն (5)-(9)	-

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Այն պատրաստված է հաշվեգրման հիմունքով, որտեղ գործառնությունները ճանաչվում են տեղի ունենալու պահին (այլ ոչ իրական միջոցների ստացման կամ վճարման պահին):

	Ծնթ.	28/02/2023 ԱՄՆ դոլար	31/12/2021 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրավական միջոցներ և համարժեքներ	6	0	721,917
Կանխավճարներ	7	0	47,897
Ընդամենը ակտիվներ		0	769,814
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտքեր	8	0	175,437
Ընդամենը պարտավորություններ		0	175,437
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Աճողական մուտքեր	9		
ՎՋՄԲ վարկ No. 8374-AM		19,851,163	18,202,882
ԶՄԸ վարկ No. 5504-AM		4,316,022	4,316,022
ԶՄԸ վարկ No. 5505-AM		2,400,582	2,400,582
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում		1,751,427	1,423,112
Համայնքների համաֆինանսավորում		2,194,937	2,335,831
Այլ շահառուներ		5,461,567	4,907,537
Մրցութային ֆոնդ		604	604
		35,976,303	33,586,571
Աճողական ծախսումներ			
Ծրագրի ծախսումներ	10	36,023,130	32,998,017
		36,023,130	32,998,017
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/վնաս		46,827	5,823
Ընդամենը զուտ ակտիվներ		0	594,377

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	Բանկ	Արժույթ	28/02/2023	31/12/2021
			ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Նպատակային հաշիվ (ԶՄԸ վարկ 5504-AM, 5505-AM)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	-	-
Նպատակային հաշիվ (ՎԶՄԲ վարկ 8374-AM)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	-	721,917
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում հաշիվ	Գանձապետարան	ՀՀ դրամ	-	-
Համայնքների համաֆինանսավորման հաշիվ	Գանձապետարան	ՀՀ դրամ	-	288,118
Մրցութային ֆոնդի հաշիվ	Գանձապետարան	ՀՀ դրամ	-	-
Ընդամենը			-	1,010,035

7. Կանխավճարներ

	28.02.2023 ԱՄՆ դոլար	31.12.2021 ԱՄՆ դոլար
Կանխավճարներ շինարարական աշխատանքների գծով*	-	47,897
Ընդամենը	-	47,897

(*) Մինչև 20% կանխավճար տրամադրվում է շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններին՝ համապատասխան բանկային երաշխիքների ստացման դեպքում:

8. Վճարվելիք գումարներ

	28.02.2023 ԱՄՆ դոլար	31.12.2021 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով (պահումներ)*	-	175,437
Ընդամենը	-	175,437

(*)Պահումները կատարվում են աշխատանքների դիմաց դուրս գրված հաշիվների 5%-ի չափով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք, որից 2.5%-ը վճարվում է աշխատանքների ավարտական ակտը ստորագրելուց հետո, իսկ մնացած 2.5%-ը պահվում է մինչև մեկ տարի ժամկետով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք կամ վճարվում է մեկ տարի ժամկետ ունեցող բանկային երաշխիքի հիման վրա:

9. Ֆինանսավորում

9.1. ՎՋՄՖ վարկ 8374-AM

	Հաշվետու տարի	Աճողական առ 28.02.2023
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կանխավճար/(կանխավճարի մարում)		1,500,000
Փոխհատուցում	1,648,281	18,351,163
Նախավճար		57,500
Ընդամենը	1,648,281	19,908,663
Ընդամենը բյուջե		20,630,000
Առ 28.02.2023 տրամադրված ֆինանսավորում %		97%

9.2. ԶՄԸ վարկ 5504-AM

	Հաշվետու տարի	Աճողական առ 28.02.2023
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կանխավճար/(կանխավճարի մարում)	-	-
Փոխհատուցում	-	4,316,022
Ընդամենը	-	4,316,022
Ընդամենը բյուջե		4,316,022
Առ 28.02.2023 տրամադրված ֆինանսավորում %		100%

9.3. ԶՄԸ վարկ 5505-AM

	Հաշվետու տարի	Աճողական առ 28.02.2023
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կանխավճար/(կանխավճարի մարում)	-	-
Փոխհատուցում	-	2,400,582
Ընդամենը	-	2,400,582
Ընդամենը բյուջե		2,400,582
Առ 28.02.2023 տրամադրված ֆինանսավորում %		100%

9.4. ՀՀ կառավարություն

	Հաշվետու տարի	Աճողական առ 28.02.2023
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	328,315	1,751,427
Ընդամենը բյուջե	328,315	3,401,618
Առ 28.02.2023 տրամադրված ֆինանսավորում %		51%

9.5. Շահառուներ

	Հաշվետու տարի	Աճողական առ 28.02.2023
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Համայնքային միջոցներ	-140,894	2,194,937
Այլ շահառուներ	554,030	5,461,567
	413,136	7,656,504
Ընդամենը բյուջե		7,676,354
Առ 28.02.2023 տրամադրված ֆինանսավորում %		100%

10. Ծրագրի ծախսեր

10.1. Ծախսերի բաշխումն ըստ ֆունդերի

Ծախսային հոդվածներ	ՎՃԱՐ Վարկ 8374-AM	ՋԱՐՎ Վարկ 5504-AM	ՋԱՐՎ Վարկ 5505-AM	ՀՀ կառավարություն	Համայնքների միջոցներ	Այլ շահառուներ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Հաշվետու տարի							
1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I ք և II ա մասերի)	980,546	-	-	325,264	-	-	1,305,810
2. Ծրագրի I ք և II ա մասերի համայնքային ֆունդերի ֆինանսավորում և նպատակային ենթաօժագրերի դրամաշնորհներ	1,389,652	-	-	-	191,279	554,030	2,134,961
3. Ծրագրի սպասարկման վճար	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	2,370,198	-	-	325,264	191,279	554,030	3,440,771
Աճողական 28.02.2023թ. դրությամբ							
1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I ք և II ա մասերի)	3,299,665	1,354,829	549,914	1,729,358	-	473	6,934,239
2. Ծրագրի I ք և II ա մասերի համայնքային ֆունդերի ֆինանսավորում և նպատակային ենթաօժագրերի դրամաշնորհներ	16,493,998	2,961,19	1,850,668	21,914	2,242,050	5,461,567	29,031,391
3. Ծրագրի սպասարկման վճար	57,500	-	-	-	-	-	57,500
Ընդամենը	19,851,163	4,316,022	2,400,582	1,751,272	2,242,050	5,462,040	36,023,130

10.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում

	Ծախսային հոդված	Աճողական ծախսումներ առ 28/02/2023	Ընդամենը բյուջե	Կատարում*
		ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I բ և II ա մասերի)		6,934,239	7,029,609	99%
2. Ծրագրի I բ և II ա մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթաօրագրերի դրամաշնորհներ		29,031,391	31,337,467	93%
3. Ծրագրի սպասարկման վճար		57,500	57,500	100%
Զբաղիված		-	-	-
Ընդամենը		36,023,130	38,424,576	94%

Ծրագիրը գրեթե ամբողջությամբ հասել է իր նպատակներին: Ծրագիրն իրականացրել է նախատեսված գրեթե բոլոր գործառնությունները: Այնուամենայնիվ, որոշ ենթաբաղադրիչներում կատարվող գործառնություններ չեն իրականացվել, ինչի համար առկա հիմնավորումներ և հիմնապատճառով: Ծրագրի մշակման նպատակի ոչ լիարժեք իրականացումը տեղի է ունեցել արտաքին քաղաքական և տնտեսական գործոնների պատճառով, որոնք դուրս են եղել Ծրագրի իրականացման խմբի վերահսկողության շրջանակներից. մասնավորապես՝ COVID-19 համաճարակը և Արցախյան պատերազմը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիրը ՎԶՄԲ վարկ No.8374-AM, ԶՄԸ վարկ No.5504-AM, ԶՄԸ վարկ No.5505-AM 2023թ. փետրվար 28-ին ավարտված տարվա վերաբերյալ ԱՄՆ դոլար

ՎԶՄԲ Վարկ-8374-AM

Ծախսային հոդված	Դիմում	Ծրագիր	ՀԲ	Տարբերություն
1. Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր (բացառությամբ ծրագրի I և II ա մասերի):	36	399,698	399,698	0
	37	141,495	141,495	0
	38	94,404	94,404	0
	39	524,169	524,169	0
	40	60,474	60,474	0
	41	22,663	22,663	0
	Ընդամենը	1,242,902	1,242,902	0
2. Ծրագրի I և II բ մասերի համայնքային ֆոնդերի ֆինանսավորում և նպատակային ենթաօրագրերի դրամաշնորհներ:	36	638,291	638,291	0
	37	124,910	124,910	0
	38	354,184	354,184	0
	39	738,785	738,785	0
	40	36,627	36,627	0
	41	12,581	12,581	0
	Ընդամենը	1,905,378	1,905,378	0
Ընդամենը		3,148,281	3,148,281	0

ԶՄԸ Վարկ No.5504-AM

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՄԸ 5504-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել:

ԶՄԸ վարկ No.5505-AM

Հաշվետու ժամանակաշրջանում ԶՄԸ 5505-AM վարկի գծով առհանումների դիմումներ չեն ներկայացվել: